



99. ՔՅԱԼԱԳՅՈՂԸ

Իրյեք մարդ էթասենն անտառնյեր շուռ կյալու, ընկես յեն Քյալագյոզի ծյեռը: Քյալագյոզը ըտրանցը պոնյելի, ճխտյելի զաղայի մեչը: Ընտյեղ ոչխար ըլելի: Մե հսկայական ճյոճ քար պերելի քցելի տոան մեչը: Հետո պերելի կրակն անյելի, նայելի տրանց իրյեսը:

Էն մի մարդը շատ դլավ ըլելի: Էդ դլավին պոնյելի, ուտոր տրյելի ուտտի տակը, քաչելի ճկելի, էրկու կտյոր անյելի, թալելի կրակը, էփելի ուտյելի: Հետո իլելի վըր քամկին քնյելի:

Էն էրկու մարդն ասելին.— Էն մի կյիչերը մեկիս կուտի, էն մեկ էլ կիչերն էլ մեկիս կուտի:

Կելնեն շիչը տնեսեն, կրակը կարմրյելի, վերցնյեն ճխտյեն տրա թաք աչքը, վուոր ճակտի վրա գտնվելի, քոռցացյելին:

Էդ Քյալագյոզը բոռացել, տեղից թոերի, տրանք փախած ին մտել ին զաղայի մեչը: Էդ Քյալագյոզը էղելի քյոռ, ինչքան ափլփելի, չի կարողանալի պոնյել: Իկալի քյաղայի տյուռը, քարը քաչելի, վուտոր կարմնջի նման տնելի քյաղայի տյուռը, որ իկյան ծեռք քցի, պոնի: Քյաղայի մեչը ոչխար ըլելի: Քյալագյոզը կանչելի ոչխարնյերին մեկ-մեկ տուրս, ափլփելի, տեսնելի ոչխար ին, պաց թողնելի ուտտաց տակից էլնելին տուրսը:

Էտ էրկու հոքին էրկու ոչխար մորթեսըն, ոչխարի մորթին քաչած վրաքները տապ-տապ էկած ին, ոչխարի հետ Քյալագյոզի փաչաների տակից ընցնեսին:

Քյալագյոզ ծյեռքի տալիս պուրտի հենց կինա ոխչարին, պաց թողնե, էլնես ին, ազատվելին: